իշխանքն Տաճկաց և մուշավէրէ առնէին։ Եւ մի ձայն աղաղակի ել թէ Փակեցէ՛ք զխանութս. եւ ամենեքեան փակեցին եւ պէզէստանս եւս եւ ապա բացին։ Եւ մունետիկն ձայնեալ թէ Մի տուրկեր չի բանի ի քաղաքս և երթան ի թէրսխանա էմինի քովն խօսակցին։ Եւ ԺԲ պէկլէրպէկի թային արարին յԱնատոլի զի զաւազակսն ըմբռնեալ սպանցեն։ Եւ դարձեալ աւուրքս ձայնեաց մունետիկն յամենայն տեղիս թէ Որ և իցեն ծառայ թագաւորին՝ թո՛ղ տեսցեն պատրաստութիւն պատերազմի, զի թագաւորն ի պատերազմ երթալոց է ցամաքով ի վերայ Ֆռանկին։ Եւ օրս էանց դեսպանն Հնդկաց ի յՈւսկիւտարն՝ երթալ յերկիրն իւր, եւ թագաւորն բազում պարգեւս ետ նմա։

Եւ աւուրքս մտանէին ի վէզիրն Վարդապետն եւ Ռուհիճանն տեսանել զբանն Երուսաղէմայ. և վէզիրն ձայնեալ ի Ցունաց զմի ոմն մեծ ի նոցանէ եւ ասացեալ թէ Ուրբաթի օրս Դ Ե մարդ ի ձեզանէ եւ Դ Ե մարդ այլ ի Հայոցն եկէք եւ տեսանեմք թէ զի՛նչ է ձեր կուիւն ընդ միմեանս. եւ եթէ բազում ամբոխիւ գայցէք ասա, որպէս ի ժամանակ Սուլէյման փաշային, որ զսարայ նորա կոխեցիք, ես նման նմա չեմ. այլ թէ այնպէս առնելոց էք՝ եւ ես ի ձեզանէ յամէն եկեղեցոյ դրան ԺԱ-ական մարդ կու կախեմ։ Եւ նա ի դողի լեալ եւ ելեալ երթայ։

Եւ Ուրբաթ օրս (29 Օքտ.) ելեալ գնացին ի տիւան վէզիրին ի Հռոմոցն և ի Հայոցն և բանալ ետուն զմեծ տէֆտէրխանան և գտին զի Հապաշն մեր էր, և զայլ էմրերն որ գտին ըռէհին լեալ ի մօտ ումեմն՝ և զայն ևս ցոյց[1]) տվեալ և կարգացին առաջի տիւանին։ Եւ վէզիրն ասացեալ ընդ ղաղիէսքէրիցն թէ Զի՞նչ ասէք այսմ բանի. եւ նոքա ասեն՝ Հասու եղաք որ

1) ցուց.